ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«30» հունիսի 2026 թ. N 77-Ա/1

ՀՐԱՄԱՆ

ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ

1. Հաստատել՝ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար նախատեսված դասընթացի ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

2. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը և «Բարեկեցության տեղեկատվական համակարգերի ձեռնարկություն» հիմնադրամին (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ դասընթացներն անցկացնել առկա եղանակով՝ առաջնորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում դասընթացի մասին հայտարարությունը (առանց խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց անձնական տվյալները հրապարակելու), ինչպես նաև՝ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով հաստատված խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար նախատեսված դասընթացի թեմաները և

ուսումնական նյութերը տեղադրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքերում:

4. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց կենտրոնացված հաշվառման հերթականությամբ կազմված ցուցակները, ինչպես նաև՝ այդ անձանց անձնագրերի/նույնականացման քարտերի պատճենները տրամադրել Հիմնադրամին:

5. Հիմնադրամի գործադիր տնօրեն տիկին Արմինե Հովսեփյանին՝

1) դասընթացն ավարտվելուց հետո մեկօրյա ժամկետում ներկայացնել դասընթացն ավարտած, որակավորված մասնակիցների ցանկը՝ դրանում ներառելով մասնակցի անունը, ազգանունը և անձնագրային տվյալները,

2) մինչև սույն թվականի հուլիսի 31-ը ներկայացնել հաշվետվություն անցկացված դասընթացների վերաբերյալ՝ ներառելով մասնակիցների առաջարկությունները և գոհունակության գնահատման արդյունքները:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

Ստորագրող
ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ
3114820360
2026-06-23 14:08:23 GMT+4
Հավաստագրման կենտրոն՝ ԵՊՀ-ԵՏԿ

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2026 թվականի հուլիսի 30-ի N 70-Ա/1 հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Խմբի համարը	Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը	Դասընթացում ընդգրկված ունկնդիրների մշտական բնակության վայրը	Դասընթացի անցկացման եղանակը	Դասընթացի անցկացման ժամկետը	Դասընթացի ծավալը
2	33	1. Կոտայքի մարզ, 3 ունկնդիր 2. Երևան քաղաք, 6 ունկնդիր 3. Լոռու մարզ, 2 ունկնդիր 4. Արարատի մարզ, 6 ունկնդիր 5. Սյունիքի մարզ, 1 ունկնդիր 6. Արմավիրի մարզ, 1 ունկնդիր 7. Շիրակի մարզ, 6 ունկնդիր 8. Տավուշի մարզ, 7 ունկնդիր 9. Վայոց ձորի մարզ, 1 ունկնդիր	առկա	16.07.2026-23.07.2026 Ժամը 10:00-14:50	48 ժամ